



Գ ՈՂԱՔԱԿԱՆ ԱՄԻՍ

ՅՈՒՆՈՒԱՐ 27

Ա Ն Գ Ղ Ի Ա

ԱՆ Գ Ղ Ի Ա նկատմամբ Գաղղիոյ միշտ սպանալից է. և իբրաւ հետ զժողովուրդէս ղեպւելիքն ալ՝ մէկը միտին կը յաջորդեն. Ֆրանսա, Սիւմ, Մաւան, Մաւանական, Նոր-Նովիս (Terre-Neuve)։ Անգղիական լրագրաց լեզուն օրըստօրէ յարձակողական կ'ըլլայ և համարձակ, իսկ գաղղիական լրագիրք՝ նոյն իսկ մեծերն (Temps, Débats . .), անգործութեան և խոհմտութեան խորհուրդ կու տան։

Անգղիոյ վարչութիւնը հրամայեց որ Յուլիոսի 21ին, պահեստի նաւատորմից զբահաւորները, որոնք Ռուդոլֆ զուամբուած և պատերազմական զինքն մէջ կրուած էին, զարձակել իրենց սովորական նաւահանգիստները դառնան։ — Անգղիական թերթերը թէ և կը գովեն Ձարին առաջարկած Ձեռնկցուած թեան ժողովոյն ծրագիրը, սակայն կէս մը հեգնելով կը յաւելուն՝ թէ նախ ինքը պէտք էր օրինակը տալ, պակսեցընելով իւր զենքերն ու զբահաւորները։

Լորտ Քիչները արդէն Սուտան է, որ լորտ Գրոմմէրին հետ կ'աշխատի կարգադրելու գայն, և իտաղաղութեան մէջ հաստատելու։ Եղիպտոսի մէջ Անգղիոյ տասնուհինգ տարիներէ ի վեր տնտեսական սընձելի վարչութիւնը նշան մ'է՝ թէ Սուտանի մէջ ինչ պիտի գործէ նա։ Թղթատարական իւրաց մէջ ալ փոփոխութիւններ ըրաւ՝ որոնք թէ՛ իրեն և թէ՛ հին գաղթականութեանց օգտակար են։ — Միով բանիւ, Անգղիա յաղթական՝ Հնդկաստանի սահմանաց վրայ, յաղթական՝ Տէրքիշներուն դէմ, և Ֆրանսայի խնդրով փառաւորութեամբ, և այժմ փառաց ծայրը հասած է։

ԱՍՏՈՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Աստորիա ներքին խնդիրներով զբաղած՝ շատ հեռուները զբաղելու ժամանակ չունեցաւ։ Եւ թէպէտ մէկ մասամբ՝ Գաղղիոյ տրէյֆուսական խնդրոյն ծանրութիւնը չունին խնդիրներն, — վասն զի այս վերջինները՝ մարդկային բարոյականի հիմնական զգացմանց չեն գալիք, — սակայն միշտ ծանրագոյն է. ուրովհետեւ Տրէյֆուսի խնդիրն անշուշտ պիտի լուծուի և հարկ է որ լուծուի, մինչդեռ աստորա-հունգարական խնդիրն՝ անլուծանելի է գործնականապէս։ Այո՛, կայ մէկ լուծում. և է այն՝ որ Գերմանական ազգը պէտք է հրաժարի կայսրութեան մէջ իրեն առանձնաշնորհէրէն վերքէն, և սլաւներուն և այլ աւանդազգաց հաւասար իրաւունքները ճանշնայ։ Կ'ընէ՞ զայս, զայրացած ժողովուրդը կրնայ զիջանիլ, և եթէ զիջանի, ուշ չէ։

Միով բանիւ, այսքան դիւրաւ վաճառք և ջնջող տարբրաց միութեան զօգն է ինքն Փրանկիսկոս Յովսէփ կայսրն՝ իրեն հրապարիչ և զբաղիչ անձնաւորութեամբը։

Գ Ա Ղ Ի Ա

Գաղղիա՝ Տրէյֆուսի խնդրոյն օրըստօրէ լուծաւորութեան պատճառաւ՝ տեսարան եղաւ բոլոր աշխարհի. և այս կնճռոտ խնդիրը՝ նոր կերպարաններ կը զգնուի։ Քէզնի տը Պըրլփը՝ լրագրաց մէջ կ'ամբաստանէ իրեն պաշտօնակիցները՝ իր թէ կողմնասիրութիւն կ'ընեն և օրինաց հակառակ կը գործեն։ Եւ իրեն ներմաղիսայ յայտնութեանց բուլտիսայ, կուլիւրը, կերպն ու եղանակը՝ կատարեալ արդարութիւնը ցուցուցին, զէթ անոնց մտաց մէջ՝ որոնք տրամաբանել գիտեն։ Այսու հանգիստ՝ սոյն խնդիրը գեա խօստարանական դատաստանի ալ կ'եղլէ. և կը կարծուի՝ որ այսու գեա աւելի ուրախի և անախորժ գէպքեր երեւան պիտի գան, և որոնք՝ հասարակաց կարծեաց անարատ մնացած մասն ալ պիտի թունաւորեն։ — Եւ մինչդեռ Գաղղիա այս ծանր խնդրոյ բեռնն ներքեւ գրեթէ կ'ընկնուի, միւս կողմէն՝ կարողուս Պընուս,

որ ընկերվարական ուսմանց մէջ նշանաւոր է, Գաղղիոյ՝ այս ողորմելի վիճակին պատճառ կը համարի անոր Սահմանադրութիւնը. և առով ծագեցաւ նոր շրջութիւն մ'ալ և կ'ուզուի նոր Սահմանադրութիւն:

Սակայն, թէպէտ և կարելորդ ալ ըլլայ նոր Սահմանադրութիւն մը, բայց այնու չի բժշկուի որ ամբողջ ազգ մը. հարկ է հիւանդութեան բուն աղբիւրը ցամաքեցընել, այսինքն, պէտք է ժողովրդեան հոգիները և մտքերը ուղղել, ալլափոխել և զօրացընել: Գաղղիոյ մերձաւորն Անգղիա՝ փոխէր է երբեք իրեն սահմանադրութիւնը, իսկ Գաղղիա քանիցս, և միշտ իրեն փաստովը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանիոյ մասին շատ գիտելիք չկայ: Կայսեր ուղեւորութիւնը մեծապէս նպաստեց կայսրութեան ծաւալման — թէ և ընդհանուր կարծիքը հակառակը կը հաստատուի. — անոր վաճառականական յարաբերութիւններն շատ ցան և ապահովցան յարեւելս: Չանաց նա իրեն հպատակաց ազգեցեւորները զօրացընել յարեւելս: Գերմանական լրագիր մը՝ Գուլիէլմոս կայսեր առ Նիկողոս Բ. Ռուսիոյ կայսրն զրաժ սիրալիր թուղթը կը յիշատակէ, զոր կուրպատեցին՝ պատերազմի պաշտօնեայն կարգաց հրամանաւ Չարին՝ հառարակաց հանդիսի մը միջոց: Սոյն թղթոյ յիշատակութեան արժանի են այն բառերը՝ որովք Գուլիէլմոս կը ցուցընէ Ռուսիոյ և Գերմանիոյ մէջ եղած այժմեան սերտ յարաբերութիւնները:

Ի Տ Ա Լ Ի Ա

Իտալիա լաւ չսկսաւ նոր տարին: Ափրիկէի խնդիրը մեծ մտատանջութիւն կու տայ իրեն. — թէպէտ վարչութիւնը կը ջանայ վստահացընել ժողովուրդը՝ թէ երկուլի տեղի չկայ, ըսելով՝ սր Մենիլիք կ'ուզէ ապստամբ Մանկաշան ընկնել, իսկ իտալիոյ հետ բարեկամ է: Սակայն եթէ այս ստոյգ է, կը հարցընէ ժողովուրդը, ինչու Մենիլիքը քովը բռններ է Ջիբրալթարէն՝ զոր իտալիան զրկեց

առ Մենիլիք. և Ջիբրալթարէն Բ'նչ կ'ընէ Մենիլիքի քով — իտալական լրագիրը այս խնդրոյս վրայ կը գրեն և գրեցին, ոմանք ի նպաստ իտալական վարչութեան, ոմանք հակառակ. և Ափրիկէի մէջ մինչեւ որ իտալական զաղթականութեան սահմաններն չուրողին, երբեք պիտի չլնային գծաութիւնը: Իտալիա մասնաւոր կերպով զարոցական խնդրոց կը զբաղի վերջերս. կ'ուզուի սոսկական վարժարանաց նկատմամբ օրէնքներ հաստատել:

Կ Ի Ե Տ Է

Քէորդ իշխանը ի կրետէ անուանեց յանձնաժողով մը 8 քրիստոնեաներու և 4 մահմեդականներու, սահմանադրութեան ծրագիր մը յօդինելու համար, սր յետոյ մեծերու հաւանութեան պիտի ենթարկուի: Յունաւանի թագաւորը՝ Մեծ խաչ փրկչի կարգին շքանշանը ընծայեց կրետէի պաշտպան չորս ծովակալներուն: — կ'ըստի՝ թէ մօտ ատեն ներս Յունաստանի Օլիա թագուհին պիտի գայ ի կրետէ, այցելութիւն ընելու համար իւր սրբւոյն՝ Քէորդ իշխանին:

Մ Ի Ա Տ Ի Ա Լ Ն Ա Հ Ա Ն Գ Ք

Թուի թէ՛ Միացեալ Նահանգք Սպանիոյ դէմ ըրած յաղթութենէն պիտի առնեն: Քուպայ յանձն շահուոր հպատակիլ և մասն հաւմարուիլ Միացեալ Նահանգաց, և գինուորական պատրաստութիւն ալ ունի ընդդիմօնաւ: Բայց Միացեալ Նահանգք կրնան խոնարհիլ ապստամբաց առջեւ և այն հողին վրայ՝ որ իրենց փառաւոր յաղթութեան կեդրոն եղաւ. կրնան ուզել՝ որ Անգլիեանց մարգարիտ համարուած Քուպան և ֆլորիպան կղզիք ձեռքերնէն ելլեն: Միացեալ Նահանգք պէտք է զօրացընեն իրենց բանաւ, կը և ծովային այծը: Փիլիպպան կղզեաց ապստամբներն ալ շեն օւղեր ճանջնալ Միացեալ Նահանգաց կատաղարութիւնը, և կը պատրաստուին զէն ի ձեռին զիմարել աւմերիկեան գունդերու ցամաք ելլելուն, և բաց ի իրենց լաւ կազմակերպութենէն և

բազմաթիւ ըլլալէն, կարծես տեղւոյն դիրքն ու օդն ալ մեծապէս կը նպաստեն իրենց: Արդէն իսկ ապստամբներն տէր են գրեթէ բոլոր արշիպէղագոսին և պաշարեր են Մա-նիլլան: Աղուինալդոյ յայտարարութիւնն մ'ը-րաւ, որուն մէջ կ'ըսէ՝ Թէ Միացեալ Նա-հանգը խոստացեր էին ազատելու փիլիպ-պինանները, և ոչ Թէ անոնց տիրապետե-լու, և կը յայտարարէ որ եթէ արին թա-փուի, պատասխանատու են անոր: Քիչ վերջը ուրիշ յայտարարութիւն մ'ալ ըրաւ արտաքին տէրութեանց որ Ամերիկացիք կը խաբուին, եթէ մտքերն իրած են՝ որ իրենց դործը խումբ մը խեղճ ոգորմելի ապստամբներու հետ է: Ուստի հաւանական չի թուիր՝ որ Միացեալ Նահանգներն իրենց տիրապետութիւնը ամ-րապնդեն՝ առանց մեծ յոգնութեան, ձանձ-րութեան և պատերազմական ծախուց:

Ս Պ Ա Ն Ի Ա

Սպանիոյ համար անցեալ տարին անհու-նապէս աղետալի եղաւ: Անյաշիջ պատերազմ՝ Միացեալ Նահանգաց հետ, կորուստ Ալլան-դականի և խաղաղականի բոլոր զաղթակա-նութեանց, հարիւրաւոր միլիոններու ի զուր վատնումն, հազարաւոր վեհանձն կեանքերու զոհողութիւն, ընդհանուր տագնաութիւն և ներքին զաղտնի ապստամբութիւններ, ահա Սպանիոյ ահաւոր հաշուեցոյցը անցեալ տա-րուան մէջ: Ուրիշ միջոց չկայ իրեն հա-մար, բայց եթէ ամփոփուի իր մէջը, տա-կաւ զօրացընել իր ելեմուտքը, ժողովրդեան մէջ զարգացընել դատաւարականութիւնը և բա-րեկեցութիւնը և ճշմարիտ քաղաքականու-թեան ծամբուն վրայ գնել ինքզինքը: Բայց պէտք չէ խաբուիլ, ժամանակը շատ տխուր է, առաջին քայլն ալ շատ դառն ու դժուարին... Վճարելիք գումարը մեծ է:

Ո Ւ Ղ Ե Ր Զ

Ապերբանիկ և վշտագնեալ սրտի սգազգեաց ձօր առ ամենասիրելի վաղամեռ անդրանիկն

Փ Ա Ռ Ն Ա Կ Ռ Ա Փ Ա Ց Է Լ Ե Ա Ն *

Ար ի յերկինս՝ այժմ արդարոցն ի կանառ, Հրեշտակաց հոյաթեւեռ շուրջ ի պար, Հատոր սրտիս, հոգի ուսմանց՝ վեհ տիւյար, Ընդէջ՝ յոյս իմ, աստղ իմ պայծառ վաղ շինար:

Խաւարեցան լուսին և արեւ ի գոյժ ձեր. Խոր խոցեցան սիրտ մեր և ոգի յանհուն սէր. Ըզմահզ ելաց տխակ տրտում սակա մեր. Համայն ողբաց և հառաչեաց կարեւիւր:

Վսեմ Հոգւոյդ պէսպէս բարեացն արդ փոխան ի շուք անուանդ՝ ձեռն անմոռաց, սրբազան, Զայս դոյզն իմ երկի՝ ի յիշատակ միտական Նուրբեմ գինչ յաւերժալոյս մահարձան:

Պաշտօնաց հայրն

ՄԱՐՏԻՆՆՈՒ ՌԱՓԱՑԷԼԵԱՆ

Տրապիզոն, 12 դեկտ. 1898.

* Գնեալ ի Տրապիզոն յամին 1864 դեկտ. 31: Աշակերտ Մուստաֆապէլ վարժարանի յամին 1877: Յամին 1883 ի Սեպտ. պոսկեալ միջալուս և վկայականաւ յերկրագործական վարժարանի ի Մէրքին՝ ի Գաղլիս: — Քննիչ երկրագործ Սըքունեական ագարակս յամին 1886:

Տեսուչ երկրագործ ագարակաց Վսեմ. Ագրա-համ փաշայի 1886-1887:

Տեսուչ երկրագործ ագարակաց Մեծ. Յօլը Անթունիէ 5թ. ի 1886:

Երկրագործ և Ուսուցիչ Գաղլ. լեզուի ի Տփլիս և յՕստեոս յամին 1888-1897: Վախ-ճանեալ յՕստեոս յամին 1897 յ8 Յուլիսի՝ Թունաւորմամբ յարքայաձուկէ՝ ըստ իւր ար-ձանագրութեան՝ ի Մայր-Տօմարին և ըստ նա-մակին առ ծնողան: